Բռնի հանցագործությունից հետո CalVCB-ն կարող է օգնել վճարել Ձեր հաշիվները

CALIFORNIA CalVCB VICTIM COMPENSATION BOARD

ՄԵՆՔ ՕԳՆՈՒՄ ԵՆՔ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՐՁԵԼ ԵՆ

- Հարձակման
- Երեխայի նկատմամբ բռնության
- Ընտանեկան բռնության
- Հարբած վիճակում մեքենավարման
- Տարեցների նկատմամբ բռնության
- Ատելության վրա հիմնված հանցագործությունների
- Սպանություն
- Մարդկանց թրաֆիքինգի
- Կողոպուտի
- Սեռական բռնություն
- Հետապնդման
- ... և այլ հանցգործությունների զոհ

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՆԵԼ ՎՃԱՐԵԼ

- Խորհրդատվության
- Հուղարկավորության և թաղման
- Եկամուտի կորստի
- Բժշկական և ատամնաբուժական բուժման
- Տեղափոխման
- Բնակավայրի անվտանգության ապահովման
- ... և այլ ծախսերի համար

victims.ca.gov
P.O. Box 3036
Sacramento, CA 95812

*Խուլ և թույլ լսողություն ունեցողներ. Զանգահարեք «California Relay Service» 711 համարով

Ինչպես կարող է CalVCB-ն օգնել Ձեզ:

- Տուժածները, ովքեր տառապում են ֆիզիկական կամ հուզական տրավմայից՝ ֆիզիկական մնասվածքի սպառնալիքի պատճառով, կարող են դիմել օգնության համար:
- CalVCB-ն օգնում է տուժածներին վճարել հանցագործության հետևանք հանդիսացող ծախսերը, որոնք չեն փոխհատուցվում որևէ այլ աղբյուրի կողմից:
- Հայտը հաստատվելուց հետո տուժածները կարող են ստանալ մինչև 70,000 դոլար օգնություն: Կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ:

Ո՞վ է իրավասու:

CalVCB-ն կարող է օգնել տուժածներին և նրանց ընտանիքներին, երբ հանցագործությունը տեղի է ունենում Կալիֆոռնիայում կամ Կալիֆոռնիայի բնակչի հետ մեկ այլ նահանգում կամ երկրում: Դիմելու համար պարտադիր չէ ունենալ Միացյալ Նահանգների քաղաքացիություն:

Տուժածները կարող են դիմում ներկայացնել հանցագործությունից հետո յոթ տարվա ընթացքում, կամ յոթ տարի անց այն բանից հետո, երբ տուժածն իմացել կամ հայտնաբերել է, որ հանցագործությունը մարմնական մնասվածք է պատճառել կամ մահվան պատճառ է դարձել: 21 տարեկան կամ ավելի փոքր տուժածները կարող են դիմել մինչև իրենց 28-ամյակը:

Ինչպես դիմեմ փոխհատուցման համար:

ԴԻՄԵՔ ԱՌՑԱՆՑ victims.ca.gov կայքի միջոցով

Տուժածների գործով պաշտպանը կարող է օգնել Ձեզ դիմումի ներկայացման գործում: Այցելեք **victims.ca.gov/get-help** և մուտքագրեք Ձեր շրջանը:



New 12/2025 [ARM]